ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշատի 1

№__2282-Ա___ « 20 » հունիսի 2024թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունը.

1. Համաձայնություն տալ՝

1) Երևանի քաղաքապետարանի 2024 թվականի կարիքների համար Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում Անդրանիկի փողոցի վերջնամասում պոմպակայանի կառուցման, Երևան քաղաքի փողոցների ասֆալտ-բետոնյա ծածկի փոսային նորոգման, Երևան քաղաքի Աջափնյակ-Դավթաշեն, Կենտրոն-Նորք-Մարաշ, Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների մանկապարտեզներում հրատապ լուծում պահանջող շինարարական և Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում ոռոգման նոր համակարգի և պոմպակայանի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորության ձեռքբերման ընթացակարգը «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ մեկ անձից գնում կատարելու ձևով իրականացնելուն.

2.Հրավերը տրամադրել միայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտում նշված անձին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ վրա:

4.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ